ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-------» ---------- 2026թ. **N ------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 431-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ, 33-րդ կետերով և 70-րդ հոդվածով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Կոֆֆենետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն ազատել Երևան քաղաքի վարչական տարածքի Նալբանդյան 23/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 105քմ, Նալբանդյան 23/2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 165քմ և Իսահակյան 7 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1552.07քմ հողամասերի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագրերով սահմանված և սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահին և մինչև վարձակալության պայմանագրերի դադարումը չվճարված վարձակալության վճարների և դրանք պայմանագրերով սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի վճարման պարտականությունից:

2. «Արարշին գրուպ» սահմանափակ պատասխամատվությամբ ընկերությանն ազատել Երևան քաղաքի վարչական տարածքի Իսահակյան 3/3 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 480.86քմ, Իսահակյան 3/4 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 135.9քմ և Իսահակյան 3/5 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 49.37քմ հողամասերի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագրերով սահմանված և սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահին և մինչև վարձակալության պայմանագրերի դադարումը չվճարված վարձակալության վճարների և դրանք պայմանագրերով սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի վճարման պարտականությունից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով առաջարկվում է ընկերություններին ներել հողի վարձավճարի գծով առկա վճարման պարտականությունները:

Հիմք ընդունելով, որ համայնքի համար առաջնահերթություն է Երևան քաղաքի բնակիչների և Երևան այցելող զբոսաշրջիկների համար բարեկարգ, հարմարավետ միջավայրի ապահովումը, ինչպես նաև կանաչապատ տարածքների ավելացումը և հաշվի առնելով, որ պարտականությունների ներումը կնպաստի համայնքային հողերի ազատմանն ու վերադարձմանը, ինչը հնարավորություն կընձեռի օրենքով սահմանված կարգով տնօրինելու և ապահովելու նշված գործառույթների իրականացմանը՝ առաջարկվում է ազատել վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագրերով սահմանված և որոշումն ուժի մեջ մտնելու պահին և մինչև վարձակալության պայմանագրերի դադարումը չվճարված վարձակալության վճարների և դրանք պայմանագրերով սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի վճարման պարտականությունից:

Որոշման նախագծում նշված տնտեսվարողներից ի օգուտ Երևան համայնքի ընդունվում է.

1. «Արարշին գրուպ» ՍՊ ընկերությունից 3 միավոր անշարժ գույք ընդամենը 74,751,224 ՀՀ դրամ կադաստրային արժեքով անշարժ գույք, ինչի դիմաց առաջարկվում է ներել 41,186,126 ՀՀ դրամ հողի վարձավճարի գծով վճարման պարտականություն, որից 35,985,965 ՀՀ դրամ ապառք և 5,200,161 ՀՀ դրամ հաշվարկված տույժ;

2. «Կոֆֆենետ» ՍՊ ընկերությունից 2 միավոր անշարժ գույք ընդամենը 37,883,800 ՀՀ դրամ կադաստրային արժեքով անշարժ գույք, ինչի դիմաց առաջարկվում է ներել 73,392,794 ՀՀ դրամ հողի վարձավճարի գծով վճարման պարտականություն, որից 66,148,414 ՀՀ դրամ ապառք և 7,244,380 ՀՀ դրամ հաշվարկված տույժ:

Ընդհանուր առմամբ Երևան համայնքին է փոխանցվում 112,635,024 ՀՀ դրամ կադաստրային արժեքով անշարժ գույք, որի դիմաց առաջարկվում է ներել 102,134,379 ՀՀ դրամ վարձավճարի գծով առկա ապառքը և որոշման ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ այդ գումարի դիմաց հաշվարկված տույժերը:

Միաժամանակ որոշումը հնարավորություն է տալիս Երևան համայնքին վերադարձնել 2484քմ հիմնականում զբոսայգու հողատարածք և այն ծառայեցնել համայնքի բնակիչների ընդհանուր շահին:

Ելնելով վերոգրյալից, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Վճարման պարտականություններից ազատելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ